2025
Սեպտեմբեր

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՆՈՐ ԶՈՎՔ» ՍՊԸ թիվ 3 մասնաճյուղին, «ՆԱՐԵԿ» ՍՊԸ-ին, «ԻՆԵՍՍԱ» ՍՊԸ թիվ 1 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Դայմոնդ Կրեդիտ» ՍՊԸ արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Իդրամ» ՍՊԸ ՎԿ-ին «ԻդրամՆեթ» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվություն տրամադրելու մասին 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Կրեդիտ Կոնցեպտ» ՈՒՎԿ ՓԲԸ «Արտաշատ» մասնաճյուղը գրանցելու մասին 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը 1 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ . 3

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 161Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 147-Ն որոշումը «2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» ոսկե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու մասին» 4

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 148-Ն որոշումը «2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու մասին» 9

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 149-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 17

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 150-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 19

Վիճակագրական ամփոփագիր 39

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՆՈՐ ԶՈՎՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 3 մասնաճյուղին, «ՆԱՐԵԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, «ԻՆԵՍՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1 մասնաճյուղին (որոշումներ թիվ 151Ա, 152Ա, 155Ա):

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Դայմոնդ Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 153Ա):

- ***«ԻդրամՆեթ» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվություն է տրամադրվել*** «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 171Ա):

- ***Գրանցվել է*** «Կրեդիտ Կոնցեպտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Արտաշատ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/326Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/340Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 6-րդ հոդվածը, 17-րդ հոդվածի 4-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «ե» կետերը՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2025 թ. սեպտեմբերի 16-ի թիվ 161Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 8.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 5.25%:

9 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 147-Ն

*2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» ոսկե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2025 թվականի նոյեմբերի 21-ից շրջանառության մեջ դնել 2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» ոսկե ներդրումային դրամները՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ով, 2-ով, 3-ով և 4-ով սահմանված նկարագրությունների ու էսքիզների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. սեպտեմբերի 9-ին (ՀՀԳՏ, 18.09. 2025):

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 147-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1g» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1 գրամ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	16.54 ± 0.12 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 գրամ քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները



Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 147-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1/4 Oz» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	25.20 ± 0.15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.



Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 147-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «25000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1/2 Oz» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	25000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	30.20 ± 0.20 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները



Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 147-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «50000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1 Oz» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	50000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38.60 ± 0,30 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները



9 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 148-Ն

*2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2025 թվականի նոյեմբերի 21-ից շրջանառության մեջ դնել 2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ով, 2-ով, 3-ով, 4-ով, 5-ով, 6-ով ու 7-ով սահմանված նկարագրությունների և էսքիզների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյան

* Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. սեպտեմբերի 9-ին (ՀՀԳՏ, 18.09. 2025):

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 148-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18 +/- 0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 148-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66 +/- 0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 148-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 +/- 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8.000.000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 148-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «5 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	60,15 +/- 0,5
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 5
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 148-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «10 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	10 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	75,50 +/- 0,7
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 6
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 148-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026»: Աջ կողմում տեղադրված են «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	100,00 +/- 0,9
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 7
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 9-ի
թիվ 148-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՍՔԻԶՆԵՐ

1. Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2026», շրջանակի մեջ: Աջ կողմում տեղադրված են «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2. Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3. Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	20 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	149,62 +/- 1,2
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 50.000 հատ

4. Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

5. Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

2026 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





9 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 149-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու ֆոնդի զուտ ակտիվների գնահատման համարժեքությունը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունքներին,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի ««Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ը հաստատելու մասին» թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգի 1-ին կետում «ներդրումային ֆոնդերի (այսուհետ՝ ֆոնդ)» բառերից առաջ լրացնել «հրապարակային» բառը:
2) Կանոնակարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում «շուկայական (արդար) գնի» բառերը փոխարինել «իրական արժեքի» բառերով:
3) Կանոնակարգը 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ կետով.
«6.1 Սույն կանոնակարգում «իրական արժեք» հասկացությունը կիրառվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (այսուհետ նաև՝ ՖՀՄՍ) սահմանված նշանակությամբ:»:
4) Կանոնակարգի 16-րդ կետում «20-րդ կետով» բառերը փոխարինել «19-րդ և 20-րդ կետերով» բառերով:
5) Կանոնակարգի 18-րդ կետում «20-րդ կետով» բառերը փոխարինել «19-րդ և 20-րդ կետերով» բառերով:
6) Կանոնակարգի 20-րդ կետում «30 աշխատանքային օրերից» բառերը փոխարինել «20 աշխատանքային օրերից» բառերով, իսկ «ոչ մեկի համար» բառերից հետո լրացնել «կամ կառավարչի գնահատմամբ տվյալ արժեթղթի շուկան բավարար իրացվելի չէ արժեթղթի իրական արժեքը արտահայտելու համար» բառերով:
7) Կանոնակարգը 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-րդ կետով.
«20.1. Կառավարիչը կարող է գնահատել տվյալ արժեթղթի շուկան որպես ոչ բավարար իրացվելի, եթե ֆոնդի կանոնադրությամբ (կանոններով) կամ կառավարչի գործունեության կանոնակարգերով սահմանված են արժեթղթի շուկան ոչ բավարար իրացվելի ճանաչելու պայմանները: Սույն կետում նշված կառավարչի ներքին իրավական ակտերը (ներառյալ՝ դրանցում

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. սեպտեմբերի 9-ին (ՀՀԳՏ, 18.09. 2025):

փոփոխությունները) Կենտրոնական բանկի պահանջով տրամադրվում են Կենտրոնական բանկին:»:

8) Կանոնակարգի 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22. Կարգավորվող շուկայում առևտրին չթույլատրված արժեթուղթը, ինչպես նաև սույն կանոնակարգի 20-րդ կետով սահմանված դեպքերում՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթը, գնահատվում է իրական արժեքով՝ հիմք ընդունելով ՖՀՄՄ-ներով նախատեսված գնահատման մեթոդների կիրառմամբ որոշված արժեթղթի հնարավոր վաճառքի ողջամիտ գինը:»:

9) Կանոնակարգը 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1-րդ կետով.

«22.1 Ֆոնդի կառավարիչը կամ անձը, ում պատվիրակված է ֆոնդի ակտիվների գնահատումը, արժեթղթերը սույն գլխով սահմանված կարգով գնահատելու դեպքում պետք է պահպանի արժեթղթի իրական արժեքի հաշվարկը հավաստող համապատասխան փաստաթղթերը առնվազն տասը տարի: Պահպանվող փաստաթղթերը, որը կարող է ներառել գնահատման մոդելը, ինչպես նաև մոդելում օգտագործված ելակետային տվյալները և ենթադրությունները պետք է բավարար լինեն կատարված գնահատման ողջամտությունը հավաստելու համար: Սույն կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկի պահանջով տրամադրվում են Կենտրոնական բանկին:»:

10) Կանոնակարգի 25-րդ կետում «սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված կարգով» բառերը փոխարինել «գնահատման օրը կտրման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հայտնի հաշվարկային արժեքով» բառերով:

11) Կանոնակարգի 33-րդ և 34-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

12) Կանոնակարգի 11-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՄՈՐՏԻԶԱՑՎԱԾ ԱՐԺԵՔՈՎ ԳՆԱՀԱՏՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ»:

13) Կանոնակարգի 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Փակ ֆոնդի ակտիվներում ներառված պարտքային արժեթղթերը կարող են գնահատվել ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են ՖՀՄՄ-ներով սահմանված՝ ֆինանսական ակտիվը ամորտիզացված արժեքով գնահատելու պայմաններին:»:

14) Կանոնակարգի 35.3-րդ կետում «30 աշխատանքային օրերից» բառերը փոխարինել «20 աշխատանքային օրերից» բառերով:

15) Կանոնակարգի 35.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35.4. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված փակ կամ միջակայքային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) արժեքը որոշվում է համաձայն ֆոնդի կանոնների՝ կտրման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հրապարակված հաշվարկային արժեքով կամ գնահատման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հայտնի փակման գնով: Եթե փակ կամ միջակայքային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) գծով գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրվա համար հրապարակվել է սույն կետով սահմանված նոր հաշվարկային արժեք կամ փակման գին, ապա տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) գնահատման համար կարող է հիմք ընդունվել նոր հրապարակված հաշվարկային արժեքը կամ փակման գինը՝ համաձայն ֆոնդի կանոնների:»:

16) Կանոնակարգի 36-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36. Սույն կանոնակարգի 3-11-րդ գլուխներով չնախատեսված այլ ակտիվները (ստացվելիք գումարները) գնահատվում են իրական արժեքով՝ հիմք ընդունելով ՖՀՄՄ-ներով նախատեսված գնահատման մեթոդների կիրառմամբ որոշված ակտիվի հնարավոր վաճառքի ողջամիտ գինը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյան

9 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 150-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը, բարելավելու ֆինանսական կազմակերպություններից ստացվող տվյալների որակը, օպտիմալացնելու հաշվետվական համակարգը և անցում կատարելու տվյալահենք միջավայրում որոշումների կայացման համակարգի,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ի 25-րդ կետը, Հավելված 2-ի «Բանկի միջոցով արտերկրից մուտք եղած և դեպի արտերկիր ուղարկված գումարների վերաբերյալ» Ձև 24-ը և «Բանկի միջոցով կատարված ներքին փոխանցումների վերաբերյալ» Ձև 24-ը ուժը կորցրած ճանաչել:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 377-Ն որոշմամբ հաստատված կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) Կարգի 2-րդ կետում «և «Ծանոթագրություն ֆինանսական վիճակի վերաբերյալ»» բառերը փոխարինել «, «Ծանոթագրություն ֆինանսական վիճակի վերաբերյալ» և «Ծանոթագրություն դրամական միջոցների փոխանցումների վերաբերյալ»» բառերով:
2) Կարգը բաժին 4-ից հետո լրացնել նոր 5-րդ բաժնով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԲԱԺԻՆ 5. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

176. «Ծանոթագրություն դրամական միջոցների փոխանցումների վերաբերյալ» հաշվետվությունում ներկայացվում է տեղեկատվություն միջազգային և ներհանրապետական փոխանցումների կամ ստացումների մասին, որոնք նախաձեռնվել են հաշվետու բանկի հաճախորդի, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպություն հաճախորդի կողմից՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով: Սույն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. սեպտեմբերի 9-ին (ՀՀԳՏ, 18.09. 2025):

հաշվետվության իմաստով հաճախորդ է հանդիսանում՝ հաշվետու բանկ դիմած ցանկացած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

177. Սույն հաշվետվության իմաստով միջազգային փոխանցումներ կամ ստացումներ են դիտարկվում հաշվետու ամսվա ընթացքում հաշվետու բանկի միջոցով արտերկիր փոխանցված կամ արտերկրից ստացված փոխանցումների վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ՝ հայաստանյան և արտասահմանյան առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգերի միջոցով կատարված փոխանցումները: Սույն հաշվետվության իմաստով առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգ է համարվում կանխիկ կամ անկանխիկ միջոցներով (բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվառման հաշվով) նախաձեռնած փոխանցման կամ ստացման կատարումն ապահովող համակարգը: Ընդ որում, միջազգային փոխանցումների մեջ չեն ներառվում հաշվետու բանկի սեփական փոխանցումները (որոնք չեն նախաձեռնվել բանկի հաճախորդի կողմից), ինչպես նաև հաշվետու բանկի, որպես հաշվարկային գործակալ կամ միջնորդ օղակ, իրականացված փոխանցումները: Սույն հաշվետվության իմաստով հաշվետու բանկը համարվում է հաշվարկային գործակալ, երբ հայաստանյան և արտասահմանյան առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգում իրականացնում է տվյալ համակարգի մասնակիցների փոխանցում կամ ստացում կատարելու համար հաշվարկային գործակալի գործառույթ: Սույն հաշվետվության իմաստով հաշվետու բանկը հանդիսանում է միջնորդ, երբ արտերկրից ստացել է կամ արտերկիր փոխանցել է ցանկացած գումար, որի նախաձեռնողը կամ ստացողը հանդիսացել է հաշվետու բանկում սպասարկվող այլ բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող հաճախորդի հաճախորդը:

178. Սույն հաշվետվության իմաստով ներհանրապետական փոխանցումներ են դիտարկվում հաշվետու ամսվա ընթացքում հաշվետու բանկի միջոցով Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնված և Հայաստանի Հանրապետությունում ստացված առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգերի միջոցով կատարված փոխանցումների վերաբերյալ տեղեկատվությունը, որը ենթակա է լրացման փոխանցման նախաձեռնող հաճախորդի սպասարկումն իրականացնող բանկի կողմից: Ընդ որում, ներհանրապետական փոխանցումների մեջ չեն ներառվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները, միջբանկային և ներբանկային փոխանցումները:

179. Հաշվետու բանկի կողմից մինչև 50 000 ԱՄՆ դոլար միջազգային փոխանցումները կամ ստացումները լրացվում են ամփոփ տեսքով, սույն հաշվետվության 181-րդ կետի համաձայն, բացառությամբ 14-ից 16-րդ, 18-րդ և 22-րդ սյունակների, որոնց համար լրացվում է «չի կիրառվում» տարբերակը:

180. 50 000 ԱՄՆ դոլարից բարձր միջազգային փոխանցումները կամ ստացումները հաշվետու բանկի կողմից լրացվում են՝ գործարք առ գործարք սույն հաշվետվության 181-րդ կետի համաձայն, եթե միջազգային փոխանցումն իրականացվել է բանկի թղթակցային հաշիվներով կամ բանկի արտասահմանյան մասնաճյուղերով: Իսկ ներհանրապետական և առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգերով միջազգային փոխանցումներ կամ ստացումներ իրականացնելու դեպքում՝ ամփոփ տեսքով սույն հաշվետվության 181-րդ կետի համաձայն, բացառությամբ 14-ից 16-րդ, 18-րդ և 22-րդ սյունակների, որոնց համար լրացվում է «չի կիրառվում» տարբերակը:

181. Սույն հաշվետվության շրջանակում միջազգային և ներհանրապետական փոխանցումների մասին տեղեկատվությունը լրացվում է հետևյալ սյունակների համաձայն՝

1) «Փոխանցման կամ ստացման բնույթ»,
2) «Փոխանցողի կամ ստացողի իրավական կարգավիճակ»,
3) «Գործարքի տեսակ»,
4) «Փոխանցման կամ ստացման եղանակ»,
5) «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ»,
6) «Փոխանցման կամ ստացման կատարման համար կիրառվող կապի միջոց»,

7) «Փոխանցման մարզ»,
8) «Ստացման մարզ»,
9) «Փոխանցման կամ ստացման երկրի կոդ»,
10) «Փոխանցման կամ ստացման գումար»,
11) «Փոխանցման կամ ստացման արժույթի կոդ»,
12) «Փոխանցման կամ ստացման գումարն արտահայտված ԱՄՆ դոլարով (հազար դոլար)»,
13) «Փոխանցման կամ ստացման գումարի մեծության դասակարգիչ (ԱՄՆ դոլարին համարժեք)»,
14) «Փոխանցող կամ ստացող իրավաբանական անձի անվանում»,
15) «Փոխանցող կամ ստացող իրավաբանական անձի ՀՎՀՀ»,
16) «Փոխանցողի կամ ստացողի հատվածային պատկանելիություն»,
17) «Փոխանցողի կամ ստացողի ռեզիդենտության երկիր»,
18) «Փոխանցման կամ ստացման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանում»,
19) «Փոխանցման կամ ստացման գործարքի կողմ հանդիսացողի ռեզիդենտության երկիր»,
20) «Փոխանցման կամ ստացման գործարքի կողմ հանդիսացողի իրավական կարգավիճակ»,
21) «Փոխանցման կամ ստացման նպատակի դասակարգում»,
22) «Փոխանցման կամ ստացման նպատակի կոդ»,
23) «Փոխանցման կամ ստացման քանակ»
24) «Փոխանցման կամ ստացման դիմաց վճարված միջնորդավճար»:

182. **«Փոխանցման կամ ստացման բնույթ»** սյունակը լրացվում է՝
1) «միջազգային», եթե փոխանցումը կամ ստացումը կատարվել է արտասահմանից, կամ դեպի արտասահման,
2) «ներհանրապետական», եթե և՛ փոխանցումը, և՛ ստացումը կատարվել են Հայաստանից կամ Հայաստանում:

183. **«Փոխանցողի կամ ստացողի իրավական կարգավիճակ»** սյունակը լրացվում է՝ փոխանցողի կամ ստացողի կարգավիճակը, ըստ սույն Կարգի 25-րդ կետով սահմանված «Գործընկերոջ իրավական կարգավիճակը» սյունակի տարբերակների:

184. **«Գործարքի տեսակ»** սյունակը լրացվում է՝
1) «ուղարկված», եթե Հայաստանի Հանրապետությունից դեպի արտասահման կամ դեպի Հայաստանի Հանրապետություն ուղղված դրամական փոխանցման հանձնարարականը ստացել և կատարել է հաշվետու բանկը,
2) «ստացված», եթե արտերկրից դեպի Հայաստանի Հանրապետություն ուղղված դրամական փոխանցման հանձնարարականը ստացել և կատարել է հաշվետու բանկը:

185. **«Փոխանցման կամ ստացման եղանակ»** սյունակը լրացվում է՝
1) «բանկային հաշվով», եթե փոխանցումը նախաձեռնվել է հաշվետու բանկի հաճախորդի կամ փոխանցողի միջոցներից (բանկային հաշվից) կամ փոխանցումը ստացվել կամ մուտքագրվել է հաշվետու բանկի հաճախորդի կամ ստացողի բանկային հաշվին,
2) «հաշվառման հաշվով», եթե փոխանցումը նախաձեռնվել է հաշվետու բանկի հաճախորդի կամ փոխանցողի միջոցներից՝ հաշվետու բանկի կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվառման հաշվից կամ փոխանցումը ստացվել կամ մուտքագրվել է հաշվետու բանկի հաճախորդի կամ ստացողի՝ հաշվետու բանկի կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվառման հաշվին,
3) «կանխիկ միջոցներով», եթե փոխանցումը նախաձեռնվել է հաշվետու բանկի հաճախորդի կամ փոխանցողի կողմից տրամադրված կանխիկ միջոցներով կամ փոխանցումը ստացվել կամ ստացողին վճարվել է կանխիկ գումարով:

186. «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ» սյունակը լրացվում է՝
1) նշելով արտասահմանյան կամ հայաստանյան առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգի անվանումը, որի միջոցով փոխանցվել կամ ստացվել է փոխանցման գումարը: Ընդ

որում, եթե արտասահմանից դրամական միջոցների ստացումը կամ ուղարկումն իրականացվում է հայաստանյան համակարգի միջոցով՝ արտասահմանյան համակարգի հետ համագործակցության շրջանակում, ապա պետք է նշվի արտասահմանյան համակարգի անվանումը, որի հետ համագործակցում է հայաստանյան համակարգը,

2) նշելով «բանկի թղթակցային հաշիվներով» տարբերակը, եթե հաշվետու բանկի կողմից միջազգային փոխանցում կամ ստացում կատարելու համար չի կիրառվում որևէ առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգ, և փոխանցումը կամ ստացումն իրականացվում է հաշվետու բանկի թղթակցային հաշիվների միջոցով,

3) նշելով «բանկի արտասահմանյան մասնաճյուղերով» տարբերակը, եթե հաշվետու բանկն ունի արտասահմանում գործող մասնաճյուղ(եր), և փոխանցումը դեպի Հայաստան իրականացվում է հաշվետու բանկի արտասահմանյան մասնաճյուղերի հաշիվների միջոցով, կամ ստացումը արտասահմանում կատարվում է հաշվետու բանկի արտասահմանյան մասնաճյուղերի հաշիվների միջոցով:

187. **«Փոխանցման կամ ստացման կատարման համար կիրառվող կապի միջոց»** սյունակը լրացվում է բանկի կողմից «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ» սյունակում նշված տարբերակին համապատասխանող այն կապուղին, որը օգտագործվում է փոխանցում կատարելու համար՝ ընտրելով սույն կետի 1-ից 5-րդ ենթակետերով սահմանված տարբերակներից որևէ մեկը.

1) «ՍՎԻՖԹ»,
2) «Ինտերնետ միջավայր»,
3) «ԷՍ-ՊԷ-ԷՖ-ԷՍ»,
4) «Ֆաքս»,
5) «Առանձնացված կապուղի»:

188. **«Փոխանցման մարզ»** սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետությունից փոխանցման նախաձեռնման վայրը՝ համաձայն սույն կետի 1-ից 12-րդ ենթակետերով սահմանված տարբերակների: Այն դեպքում, երբ փոխանցումը նախաձեռնվել է անկանխիկ եղանակով, ապա նշվում է հաշվետու բանկի գլխամասային գրասենյակի գտնվելու մարզը.

1) «Երևան»,
2) «Արագածոտն»,
3) «Արարատ»,
4) «Արմավիր»,
5) «Գեղարքունիք»,
6) «Կոտայք»,
7) «Լոռի»,
8) «Շիրակ»,
9) «Սյունիք»,
10) «Տավուշ»,
11) «Վայոց Ձոր»
12) «չի կիրառվում», եթե փոխանցման նախաձեռնումն իրականացվում է արտասահմանում:

189. **«Ստացման մարզ»** սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետությունում փոխանցման ստացման վայրը՝ համաձայն սույն կետի 1-ից 13-րդ ենթակետերով սահմանված տարբերակների: Այն դեպքում, երբ փոխանցումը ստացվել է անկանխիկ եղանակով, ապա նշվում է ստացող բանկի գլխամասային գրասենյակի գտնվելու մարզը.

1) «Երևան»,
2) «Արագածոտն»,
3) «Արարատ»,
4) «Արմավիր»,

5) «Գեղարքունիք»,
6) «Կոտայք»,
7) «Լոռի»,
8) «Շիրակ»,
9) «Սյունիք»,
10) «Տավուշ»,
11) «Վայոց Ձոր»,
12) «չի կիրառվում», եթե փոխանցման ստացումն իրականացվում է արտասահմանում,
13) «անհասցե փոխանցում», երբ ներհանրապետական փոխանցման համար վճարողի կողմից չի հստակեցվել ներհանրապետական փոխանցման ստացման վայրը:

190. **«Փոխանցման կամ ստացման երկրի կոդ»** սյունակը լրացվում է այն երկրի կոդը (ըստ ԻՍՕ (ISO) 3166-1 alpha-3 միջազգային ստանդարտի), որտեղից կատարվել է դեպի Հայաստանի Հանրապետություն փոխանցումը կամ ստացումը կամ այն երկրի կոդը, որտեղ պետք է կատարվի փոխանցված գումարի վճարումը ստացողին:
191. **«Փոխանցման կամ ստացման գումար»** սյունակը լրացվում է փոխանցման կատարման կամ վճարման համար ստացված գումարը:
192. **«Փոխանցման կամ ստացման արժույթի կոդ»** սյունակը լրացվում է փոխանցման կատարման կամ վճարման համար ստացված գումարի արժույթի ԻՍՕ (ISO) 4217 ստանդարտին համապատասխան կոդը:
193. **«Փոխանցում կամ ստացում՝ ԱՄՆ դոլարով»** սյունակը լրացվում է փոխանցված կամ ստացված գումարն արտահայտված ԱՄՆ դոլարով: Ընդ որում, փոխանցման կամ ստացման արժույթը ԱՄՆ դոլարից տարբեր լինելու դեպքում փոխանցման կամ ստացման գումարն արտահայտվում է ԱՄՆ դոլարով՝ հաշվարկված գործարքի կատարման օրվա դրությամբ այն փոխարժեքով, որը հրապարակել է տվյալ արժույթը թողարկող Կենտրոնական կամ Ազգային բանկը:
194. **«Փոխանցման կամ ստացման գումարի մեծության դասակարգիչ (ԱՄՆ դոլարին համարժեք)»** սյունակը լրացվում է յուրաքանչյուր փոխանցված կամ ստացված մեկ գործարքի մեծությունից կախված միևնույն տողում խմբավորված գումարների դասակարգման բնութագրումը, ըստ հետևյալ տարբերակների՝
    1) «մինչև 100»,
    2) «101-ից մինչև 250»,
    3) «251-ից մինչև 500»,
    4) «501-ից մինչև 1000»,
    5) «1001-ից մինչև 2500»,
    6) «2501-ից մինչև 5000»,
    7) «5001-ից մինչև 10000»,
    8) «10001-ից մինչև 25000»,
    9) «25001-ից մինչև 50000»,
    10) «50001-ից մինչև 100000»,
    11) «100001-ից մինչև 250000»,
    12) «250001-ից մինչև 500000»,
    13) «500001-ից մինչև 1000000»,
    14) «1000001-ից մինչև 2500000»,
    15) «2500001-ից մինչև 5000000»,
    16) «5000001-ից ավելի»:
195. **«Փոխանցող կամ ստացող իրավաբանական անձի անվանում»** սյունակը լրացվում է՝
    1) Հայաստանի Հանրապետության տարածքում գումարի փոխանցումը նախաձեռնող կամ գումարը ստացող իրավաբանական անձի անվանումը,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե «Փոխանցողի կամ ստացողի իրավական կարգավիճակ» սյունակում լրացվում է «ֆիզիկական անձ» կամ «անհատ ձեռնարկատեր» տարբերակը, փոխանցման կամ ստացման գումարը չի գերազանցում 50,000 ԱՄՆ դոլարը, «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ» սյունակում լրացվում է առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգի անվանումը, կամ «Փոխանցման կամ ստացման բնույթ» սյունակում լրացվում է «ներհանրապետական» տարբերակը:

196. **«Փոխանցող կամ ստացող իրավաբանական անձի ՀՎՀՀ»** սյունակը լրացվում է՝
   1) Հայաստանի Հանրապետության տարածքում գումարի փոխանցումը նախաձեռնող կամ գումարը ստացող իրավաբանական անձի ՀՎՀՀ-ն,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում գումարի փոխանցումը նախաձեռնող կամ գումարը ստացող իրավաբանական անձն ոչ ռեզիդենտ է, «Փոխանցողի կամ ստացողի իրավական կարգավիճակ» սյունակում լրացվում է «ֆիզիկական անձ» կամ «անհատ ձեռնարկատեր» տարբերակը, փոխանցման կամ ստացման գումարը չի գերազանցում 50,000 ԱՄՆ դոլարը, «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ» սյունակում լրացվում է առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգի անվանումը կամ «Փոխանցման կամ ստացման բնույթ» սյունակում լրացվում է «ներհանրապետական» տարբերակը:

197. **«Փոխանցողի կամ ստացողի հատվածային պատկանելիություն»** սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գումարի փոխանցումը նախաձեռնողի կամ գումարը ստացողի հատվածային պատկանելիությունը, ըստ սույն Կարգի 23-րդ կետով սահմանված «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը» սյունակից համապատասխան տարբերակը, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխանցման կամ ստացման գումարը չի գերազանցում 50,000 ԱՄՆ դոլարը, «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ» սյունակում լրացվում է առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգի անվանումը, «Փոխանցման կամ ստացման բնույթ» սյունակում լրացվում է «ներհանրապետական» տարբերակը, որոնց դեպքում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը:

198. **«Փոխանցողի կամ ստացողի ռեզիդենտության երկիր»** սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գումարի փոխանցումը նախաձեռնողի կամ գումարը ստացողի ռեզիդենտության երկիրը, ըստ սույն Կարգի 24-րդ կետով սահմանված «Գործընկերոջ երկիրը» սյունակի տարբերակների:

199. **«Փոխանցման կամ ստացման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանում»** սյունակը լրացվում է՝
   1) արտերկրից փոխանցումը նախաձեռնած (փոխանցող) կամ արտերկրում փոխանցումը ստացող փոխանցման կամ ստացման գործարքի հակառակ կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե «Փոխանցման կամ ստացման գործարքի կողմ հանդիսացողի իրավական կարգավիճակ» սյունակում լրացվում է «ֆիզիկական անձ» կամ «անհատ ձեռնարկատեր» տարբերակը, փոխանցման կամ ստացման գումարը չի գերազանցում 50,000 ԱՄՆ դոլարը, «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ» սյունակում լրացվում է առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգի անվանումը, կամ «Փոխանցման կամ ստացման բնույթ» սյունակում լրացվում է «ներհանրապետական» տարբերակը:

200. **«Փոխանցման կամ ստացման գործարքի կողմ հանդիսացողի ռեզիդենտության երկիր»** սյունակը լրացվում է փոխանցման կամ ստացման գործարքի հակառակ կողմ հանդիսացողի ռեզիդենտության երկրի կոդը, ըստ սույն Կարգի 24-րդ կետով սահմանված «Գործընկերոջ երկիրը» սյունակի տարբերակների:

201. **«Փոխանցման կամ ստացման գործարքի կողմ հանդիսացողի իրավական կարգավիճակ»** սյունակը լրացվում է արտերկրից փոխանցումը նախաձեռնած (փոխանցած) կամ արտերկրում փոխանցումը ստացող փոխանցման կամ ստացման գործարքի հակառակ կողմ հանդիսացողի իրավական կարգավիճակը, ըստ սույն Կարգի 25-րդ կետով սահմանված «Գործընկերոջ իրավական կարգավիճակը» սյունակի տարբերակների:

202. **«Փոխանցման կամ ստացման նպատակի դասակարգում»** սյունակը լրացվում է՝

1) «սեփական հաշիվների միջև փոխանցում», երբ հաճախորդը տվյալ բանկում ունեցած իր բանկային հաշվից փոխանցում է իրականացրել իր՝ արտասահմանյան բանկում ունեցած բանկային հաշվին կամ արտասահմանյան բանկում ունեցած իր բանկային հաշվից միջոցներ է փոխանցել հաշվետու բանկում ունեցած իր բանկային հաշվին,

2) «առևտրային բնույթի փոխանցում», երբ.

ա. ֆիզիկական անձը անշարժ գույք ձեռք բերելու կամ վաճառելու, ինչպես նաև շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով իրականացնում է փոխանցումներ, այդ թվում՝ այդ նպատակներով տրամադրվող անհատույց ֆինանսական օգնության կամ նվիրատվության տրամադրման միջոցով,

բ. հաճախորդի կողմից փոխանցվող կամ ստացվող գումարի նպատակը սույն Կարգի 202-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ չի դասակարգվում որպես «ոչ առևտրային բնույթի»,

գ. ֆիզիկական անձը փոխանցման կամ ստացման գումարը ստացել կամ փոխանցել է իրավաբանական անձից կամ իրավաբանական անձին, եթե չկա լրացուցիչ տեղեկատվություն, որ փոխանցվող կամ ստացվող գումարի նպատակը, սույն հաշվետվության 202-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, դասակարգվում է որպես «ոչ առևտրային բնույթի փոխանցում»,

3) «ոչ առևտրային բնույթի փոխանցում», երբ.

ա. ֆիզիկական անձի անունով արտերկրից ստացվել է կամ արտերկիր փոխանցվել են անհատույց ֆինանսական միջոցներ, որոնց նպատակը ֆիզիկական անձի ընթացիկ կարիքների բավարարումն է: Մասնավորապես, ընթացիկ ֆինանսական օգնությունը, նվիրատվությունը, նպաստը, թոշակը և այլ նմանատիպ միջոցների փոխանցումը կամ ստացումը,

բ. ֆիզիկական անձի անունով արտերկրից ստացվել է կամ արտերկիր փոխանցվել է ֆիզիկական անձի աշխատանքի դիմաց աշխատավարձ: Մասնավորապես, երբ ֆիզիկական անձն աշխատել է արտերկրում տեղակայված կազմակերպությունում և աշխատավարձը ստացել է՝ գտնվելով իր ռեզիդենտության երկրում,

գ. ֆիզիկական անձի անունով արտերկրից ստացվել է կամ արտերկիր փոխանցվել է ֆիզիկական անձի աշխատանքի դիմաց աշխատավարձ: Մասնավորապես, երբ ֆիզիկական անձն աշխատում է Հայաստանի Հանրապետությունում տեղակայված այնպիսի կազմակերպությունում, որտեղ աշխատավարձի վճարումը կատարվում է արտերկրից փոխանցման միջոցով,

դ. իրավաբանական անձը փոխանցման գումարը փոխանցել կամ ստացել է դրամաշնորհ, նվիրատվություն և այլ անհատույց միջոցներ փոխանցելու կամ ստանալու նպատակով, որի մասին նշված է փոխանցման կամ ստացման հանձնարարականում:

203. **«Փոխանցման կամ ստացման նպատակի կոդ»** սյունակը լրացվում է՝

1) Հայաստանի Հանրապետությունից նախաձեռնված կամ Հայաստանի Հանրապետությունում ստացված փոխանցման կամ ստացման նպատակի կոդը՝ ընտրելով համապատասխանաբար Հավելված 10-ով սահմանված ցանկից:

2)«չի կիրառվում», եթե փոխանցման կամ ստացման գումարը չի գերազանցում 20,000 ԱՄՆ դոլարը կամ «Փոխանցման կամ ստացման միջոց կամ համակարգ» սյունակում լրացվում է առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգի անվանումը կամ «Փոխանցման կամ ստացման բնույթ» սյունակում լրացվում է «ներհանրապետական» տարբերակը:

204. **«Փոխանցման կամ ստացման քանակ»** սյունակը լրացվում է տվյալ տողում ամփոփված փոխանցումների կամ ստացումների քանակը:

205. **«Փոխանցման կամ ստացման դիմաց վճարված միջնորդավճար»** սյունակը լրացվում է հաճախորդի կողմից փոխանցման կամ ստացման դիմաց հաշվետու բանկին վճարված միջնորդավճարի գումարի չափը՝ արտահայտված ՀՀ դրամով:»:

Հավելված 10

Դրամական միջոցների փոխանցման նպատակի կոդեր

Խմբի կոդ	Կոդ	Կատեգորիաներ	Բացատրություն
1000	**Ապրանքներ**		
	1001	Ապրանքների արտահանում կամ ներմուծում	Փոխանցում կամ ստացում, որի հիմքում ընկած է ապրանքների արտահանումը կամ ներմուծումը՝ սեփականության իրավունքի փոփոխությամբ:
2000	**Ծառայություններ**		
	2010	Ապրանքների վերամշակման դիմաց վճարներ	Վերամշակման նպատակով ներմուծված կամ արտահանված ապրանքների վերամշակման դիմաց վճարումներ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև:
	2020	Տեխնիկական սպասարկման և վերանորոգման դիմաց գումարներ	Ներառում է վերանորոգման նպատակով շարժական միջոցների (օրինակ՝ նավեր, ինքնաթիռներ և այլ տրանսպորտային միջոցներ) վերանորոգման համար ստացված կամ վճարված միջոցները:
2010	**Տրանսպորտ**		
	2031	Բեռնատար ծովային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար ծովային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2032	Մարդատար օդային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է մարդատար օդային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2033	Բեռնատար օդային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար օդային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2034	Մարդատար երկաթուղային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է մարդատար երկաթուղային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:

	2035	Բեռնատար երկաթուղային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար երկաթուղային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2036	Մարդատար ցամաքային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է մարդատար կամ ցամաքային կամ ավտոտրանս-պորտային կամ ծառայությունների դիմաց վճարմանը:
	2037	Բեռնատար ցամաքային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար կամ ցամաքային կամ ավտոտրանս-պորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2038	Հարակից, օժանդակ և այլ ծառայություններ	Հարակից, օժանդակ և այլ ծառայությունների դիմաց վճարներին են վերաբերում օդանավակայաններում, նավահանգիստներում և այլ կայաններում մատուցվող ծառայությունները, հատկապես բեռնման-բեռնաթափման աշխատանք-ները, պահպանումն ու պահեստավորումը, փաթեթա-վորումը, նավերի, ինքնաթիռների ուղեկցումը, տրանս-պորտային միջոցների շահագործումն ու մաքրումը, փրկարարական աշխատանքները:
2040	**Ճանապարհորդություն**		
	2041	Հյուրանոցի ամրագրման վճարներ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է հյուրանոցում, հյուրատանը, բնակարաններում գիշերելու ծառայությունների դիմաց վճարներին:
	2042	Առողջության հետ կապված վճարներ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է դեղորայքի ձեռքբերմանը և բժշկական ծառայությունների դիմաց վճարներին:
	2043	Կրթության հետ կապված վճարներ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է կրթության դիմաց ծառայությունների վճարներին՝ հանրակացարանի, ուսուցման և այլ ուսումնական ծառայությունների դիմաց:
	2044	Ճանապարհոր-դության այլ ծախսեր	Փոխանցում կամ ստացում, որը ներառում է տուրիստական փաթեթների ձեռքբերումը և տուրիզմի նպատակով իրականացված այլ վճարներ (էքսկուրսիաներ, թանգարանների մուտքավճարներ և այլն):

2050	**Շինարարություն**		
	2051	Շինարարություն արտասահմանում	Ստացում, որը վերաբերում է հիմնական միջոցների, ինժեներական կառույցների՝ ճանապարհ, կամուրջ, կառուցման, վերազինման կամ վերանորոգման դիմաց իրականացված վճարներին: Այստեղ լրացվում են մինչև 1 տարի տևողությամբ նախագծերի մասով ՀՀ ռեզիդենտների կողմից արտերկրում իրականացված աշխատանքների դիմաց վճարները:
	2052	Շինարարություն հաշվետու երկրում	Փոխանցում, որը վերաբերում է հիմնական միջոցների, ինժեներական կառույցների՝ ճանապարհ, կամուրջ, կառուցման, վերազինման կամ վերանորոգման դիմաց իրականացված վճարներին: Այստեղ լրացվում են մինչև 1 տարի տևողությամբ նախագծերի մասով ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ-ում իրականացված աշխատանքների դիմաց վճարները:
2060	**Ապահովագրական և կենսաթոշակային ծառայություններ**		
	2061	Ապահովագրական վճարներ	Ապահովագրական վճարները ներառում են կյանքի ապահովագրության, ոչ կյանքային ապահովագրության, վերապահովագրության, բեռների ապահովագրության և այլ տեսակի ապահովագրական ծառայությունների դիմաց վճարները:
	2062	Ապահովագրական հատուցում	Ապահովագրական հատուցումները ներառում են ապահովագրական ծառայությունների շրջանակներում ստացված կամ փոխանցված հատուցումները:
	2063	Վճարված կամ ստացված թոշակներ	Ներառում են ոչ ռեզիդենտներին վճարված և ռեզիդենտների ստացած թոշակները և նպաստները:
2070	**Հեռահաղորդակցության, տեղեկատվական, համակարգչային ծառայություններ, փոստային ծառայություններ**		

	2071	Փոստային և սուրհանդակային ծառայություններ	Փոստային ծառայությունները ներառում են փոստային գրասենյակի ծառայությունները, ինչպիսիք են նամականիշների և դրամական պատվերների վաճառքը, մատուցված փոստային, հեռագրային ծառայության դիմաց վճարները և այլն: Բացառություն են կազմում փոստային գրասենյակների կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունները, ինչպիսիք են՝ բանկային և խնայողական հաշիվների հետ կապված ծառայությունները (որոնք հաշվառվում են ֆինանսական ծառայությունների ներքո), փոստի պատրաստման ծառայությունները (գրանցվում են այլ բիզնես ծառայությունների ներքո) և փոստային կապի համակարգերի հետ կապված կառավարման ծառայությունները (ներառվում են հեռահաղորդակցության ծառայությունների մեջ):
	2072	Հեռահաղորդակ-ցության ծառայություններ	Հեռահաղորդակցության ծառայությունները ներառում են այն փոխանցումները կամ ստացումները, որոնք իրականացվել են ձայնի, պատկերի, տվյալների կամ այլ տեղեկատվության՝ հեռախոսի, հեռագրի, ռադիոյի կամ հեռուստատեսային ալիքների միջոցով հեռարձակման դիմաց: Ներառում է նաև հեռահաղորդակցության ցանցի սպասարկման դիմաց վճարները:
	2073	Համակարգչային ծառայություններ	Համակարգչային ծառայությունները ներառում են համակարգչային սարքավորումների սպասարկման, վերանորոգման, պատվերով համակարգչային ծրագրերի մշակման, համակարգչային ոլորտում տրամադրված խորհրդատվության դիմաց վճարները, ինչպես նաև ոչ անհատական պատվերով մշակված ծրագրային փաթեթներից օգտվելու համար լիցենզիոն վճարները և այլ նմանատիպ ծառայությունների դիմաց վճարները:
	2074	Տեղեկատվական ծառայություններ	Տեղեկատվական ծառայությունները ներառում են տեղեկատվական գործակալությունների ծառայությունների, ինչպես ԶԼՄ-ի նորությունների, նկարների ու հոդվածների տրամադրման, այնպես էլ տվյալների բազաների ստեղծման, տարածման ու պահպանման ծառայությունների դիմաց վճարները: Այստեղ ներառվում է նաև թերթերի և ամսագրերի ուղիղ անհատական բաժանորդագրությունը փոստային կամ այլ եղանակով առաքման միջոցով:

	2075	Ֆինանսական ծառայություններ	Ֆինանսական ծառայությունները ներառում են ֆինանսական միջնորդության և այլ ֆինանսական ծառայությունների դիմաց վճարները, մասնավորապես այն վճարները, որոնք կապված են արժեթղթերի, ակտիվների կառավարման, ֆինանսական շուկայի կարգավորման և այլ գործառնությունների հետ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների ծառայությունների դիմաց վճարներից):
	2076	Վճարներ մտավոր սեփականության օգտագործման համար	Մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարները ներառում են մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարները, որոնց թվում են՝ արտոնագրերը, ապրանքանիշները, հեղինակային իրավունքը, առևտրային գաղտնիքները և այլ նմանատիպ վճարներ:
2080	**2080**	Ֆինանսական ծառայություններ	Ֆինանսական ծառայությունները ներառում են ֆինանսական միջնորդությանը և այլ ֆինանսական ծառայությունների դիմաց վճարները, մասնավորապես այն վճարները, որոնք կապված են արժեթղթերի, ակտիվների կառավարման, ֆինանսական շուկայի կարգավորման և այլ գործառնությունների հետ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների ծառայությունների դիմաց վճարներից):
2090	**2090**	Մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարներ	Մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարները ներառում են մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարները, որոնց թվում են՝ արտոնագրերը, ապրանքանիշները, հեղինակային իրավունքը, առևտրային գաղտնիքները և այլ նմանատիպ վճարներ:
2100	**Պրոֆեսիոնալ և կառավարման խորհրդատվական ծառայություններ**		
	2101	Իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, հաշվետարական և հարկային խորհրդատվական ծառայություններ	Ներառում է իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, հաշվետարական և հարկային խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարները:
	2102	Բիզնեսի և կառավարման ոլորտում խորհրդատվական ծառայություններ, հասարակության հետ կապեր	Ներառում է կառավարչի, կառավարման ոլորտում խորհրդատվական, հասարակայնության հետ կապերի դիմաց մատուցած ծառայությունների դիմաց վճարները:

	2103	Գովազդային, շուկայի ուսումնասիրման և հասարակական կարծիքների հետազոտման ծառայություններ	Ներառում է գովազդային, շուկայի ուսումնասիրման և հասարակական կարծիքների հետազոտման ծառայությունների դիմաց վճարները:
2110	**Տեխնիկական, առևտրի հետ կապված և այլ գործնական ծառայություններ**		
